Ծորայէլի, իսկ որ զայս ամենայն ելիք ի միում
վայրկենի՝ ո՞րչափ առնուցու։ Եթէ անտ՝ ոչ
է ակնառութիւն, և ըստ չափոյն է չափն, և
այգեգործացն հաւասար է ակն՝* նախաժամուն
և մետասանին, ապա[ա] ի բազմել բանին մար-
դացելոյ ի բարձն փառաց՝ և սրբազան ծա-
նաւթքն ընդ նմա՝[բ] նստուցանէ և զսիրելիս իւր
յաթոռ փառաց ընդ աջմէ նորա ընդ Պաւղո-
սի աշխարհալոյս վարդապետին զանուանակի-
րըն իւր՝ քննել զնորս Ծորայել. և տրոհել զայ-
ծիսն և արտաքս հանել՝ և առնուլ զպարգևս
և զպսակս ի ձեռանէ Տեառն և բաշխել բեղ-
նաւորացն և մուծանել յառագաստն։

Զի թէ դշխոյն և Նինուէացիքն դատեն՝
ո՞րչափ ևս սա. և զի ոչ երկոտասան միայն
աթոռ, քանզի և ոչ բաղ՝ ուստերք Յակոբայ
յերկրէ, այլ յոլով ազգք ըստ լեզուացն և ըստ
թըւոյ հրեշտակացն. այսպէս յոլով աթոռք
ըստ համարուոյ համաւրէն սեռից ազանց։ Եւ
յորժամ ժամանէր յանապատն, ոչ զղջանայր
և ոչ թախծէր, կամ կեղծաւորեալ խանկա-
րէր զդէմս. այլ լըւանայր զերեսս սրտին ի
խըղճէ կարծեաց մշտատեսակ[գ] աշխարհական

*. Լուս. «չափն»:
ա. Ձեռ. «ապայ»:
բ. Ձեռ. «նմայ»:
գ. Ձեռ. «մղտատեսակ»: